# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՇՄՆ-ԳՀ-ԱՇՁԲ-19/03» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան «15» «օգոստոսի » 2019թ.
ժամը 10·00

Մասնակցում էին՝

| | |
|---|---|
| Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳՊ/ԳԱՊ) | Ս Բալոյան |
| Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ) | Ն.Աբրահամյան |
| Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ) | Տ.Ասատրյան |
| Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ) | Հ Հովհաննիսյան |
| Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ) | Է.Միհրյան |
| Գնման Պատասխանատու/ Մրցույթի համակարգող (ԳՊ/ՄՀմ) | Լ Զոհրաբյան |

## 1. «ՇՄՆ-ԳՀ-ԱՇՁԲ-19/03» ծածկագրով մրցույթի գնահատման արդյունքների ամփոփման նիստի անցկացման վայրը, օրը և ժամը.

(Ս.Բալոյան)

1 1 «ՇՄՆ-ԳՀ-ԱՇՁԲ-19/03» ծածկագրով մրցույթի մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի գնահատման արդյունքների ամփոփման նիստը կայացել է 2019 թվականի օգոստոսի 15-ին, ժամը 10 00-ին, շրջակա միջավայրի նախարարության շենքում, ք.Երևան, Կառավարության 3շ., 5-րդ հարկ հասցեում

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 2. «ՇՄՆ-ԳՀ-ԱՇՁԲ-19/03» ծածկագրով մրցույթի հրավերով սահմանված կարգով մասնակիցների վերաբերյալ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և եզրակացությունը ստանալու վերաբերյալ տեղեկություններ.

2.1. «ՇՄՆ-ԳՀ-ԱՇՁԲ-19/03» ծածկագրով մրցույթի քարտուղարի կողմից 2019 թվականի օգոստոսի 9-ին ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն հարցում է ուղարկվել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե կողմից սահմանված ժամկետում ստացվել է եզրակացություն առ այն, որ ՀՀ ԳԱԱ «Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող

## 3 «ՇՄՆ-ԳՀ-ԱՇՁԲ-19/03» ծածկագրով մրցույթի 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի ներկայացման մասին

(Ս Բալոյան)

3 1. 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից Հրավերի 2-րդ մասի 3.1 կետով նախատեսված փաստաթղթերը էլեկտրոնային ձևով սահմանված ժամկետում ներկայացվել են շրջակա միջավայրի նախարարության gnumner.mnp@yandex ru էլեկտրոնային փոստի հասցեին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0

## 4. Հանձնաժողովը որոշեց՝

(Ս Բալոյան)

4.1. Հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները չափաբաժին 1-ով հաղթող ճանաչել ՀՀ ԳԱԱ «Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն» ՊՈԱԿ -ին.

4 2 Պայմանագրի կնքման նպատակով «ՇՄՆ-ԳՀ-ԱՇՁԲ-19/03» ծածկագրով մրցույթի հաղթող ճանաչված մասնակցին՝ ծանուցել 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի կատարման ապահովում տուժանքի ձևով՝ միակողմանի հաստատված հայտարարություն և վճարման պահանջագիր՝ կնքվելիք պայմանագրի գնի 10 տոկոսի չափով

4 3. Հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

4 4 «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ անգործության ժամկետ չի սահմանվում.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 5 Նիստին ներկա հանձնաժողովի անունները և ազգանունները:

| | |
|---|---|
| Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳՊ/ԳԱՊ) | Ս.Բալոյան |
| Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ) | Ն.Աբրահամյան |
| Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ) | Տ Ասատրյան |
| Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ) | Հ Հովհաննիսյան |
| Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ) | Է Միհրյան |
| Գնման Պատասխանատու/ Մրցույթի համակարգող (ԳՊ/ՄՀմ) | Լ.Զոհրաբյան |